ԴՎԻՆԻ ԱՐՇԱՎԱՀՄԲԻ 1983—1984 ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

1983—1984 թթ. ընթացքում Դվինում աշխատանքները շարունակվել են նախորդ տարիներին պեղված նույն հատվածներում. հետախուզական պեղումներ են կատարվել քաղաքի տարածքում և մոտակա Տիկնունի ամրոցում։

Դվինի կենտրոնական թաղամասը, որտեղ կենտրոնացված են աշխարհիկ և պաշտամունքային հիմնական կառույցները, հետաքրքիր նյութեր է տալիս քաղաքի վաղ միջնադարյան ժամանակաշրջանի պատմության, ճարտարապետության, արհեստագործական արտադրանքի և ընդհանրապես նյութական մշակույթի վերաբերյալ։ Վերջին 15 տարում այստեղ պեղվում է պալատական մի շինություն, որն իրավամբ համարվում է Դվինի կաթողիկոսարանի առաջին շենքը, կառուցված V դարի 70—80-ական թթ. Գյուտ կամ Հովհան Մանդակունի կաթողիկոսների օրոք։ Ճարտարապետական մտահղացմամբ դա եղակի հուշարձան է, վաղ միջնադարյան պալատական հորինվածքների դասական մի օրինակ։ Պալատի պատմաճարտարապետական վերլուծությանը, հատակագծային-տարածական հարցերին, ներքին հարդարանքին բազմիցս անդրադարձել ենք մեր նախորդ աշխատանքներում[1]։

Նշված ժամանակամիջոցում աշխատանքները տարվել են պալատի երեք թևում։ Հարավային կողմում բացվել են մանրամասներ, որոնք պարզորոշ ցույց են տալիս պալատի կենտրոնական սյունազարդ դահլիճի և կից սենյակների համաժամանակյա լինելը։ Սենյակաշարքի և դահլիճի պատերի սվաղը արված է միևնույն ժամանակ։ Հարավային հատվածում ընդգծվում է պալատի ճակատը։ Բացվել է 3,1 մ հաստությամբ քարաշար պարսպի մի հատված (հիմքերը), որին հենվել է հարավային սենյակաշարքը։ Նույն լայնությամբ պարսպի մի հատված հայտնի էր նախորդ տարիներից, մոտ 50,0 մ արևելը, կաթողիկե եկեղեցու հարավային մասում, արևելյան խորանի ուղղությամբ։ Բացառված չէ, որ V դարում կաթողիկոսարանը իր կառույցներով և զերեզմանատնով առանձին պաշտպանված է եղել պարսպապատով։ Այս կարծիքը նոր չէ։ Դեռևս 1930-ական թթ. կենտրոնական թաղամասում բացվել են պարսպի և մուտքի հետքեր՝ ջրային խրամատի եզրով[2]։

Պալատի հյուսիսային թևում, դահլիճին զուգահեռ եղել է երկար միջանցք, որը դահլիճի հետ կապվել է երկու ոչ լայն մուտքերով։ Ըստ երևույթին այս թևում կենտրոնացվել է պալատի տնտեսական մասը։ Բացվող սենյակների հատակները սալարկված են եղել մանր գետաքարերով և ունեն սպիտակ ավազաքարից կլոր խարիսխներ՝ փայտե սյուների համար։

Պալատի արևմտյան թևում նախորդ պեղումներից հայտնի VI դարի կրակապաշտական մեհյանը ատրուշանով խիստ ավերվել է 572 թ. ապստամբության ժամանակ և նրա հատակագծային շատ մանրամասներ մեզ համար ան-

---

1 А. А. Калантарян. Новые материалы о дворцах раннесредневековой Армении.—II Международный симпозиум по армянскому искусству. Ереван, 1978. *Տե՛ս նաև ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1975, № 7. 1978, № 2, 1982, № 2, 12, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2։*

2 Կարո Վաֆադարյան. *Դվին քաղաքը և նրա պեղումները. Երևան, 1952, էջ 41—42։*

հայտ են։ 1983—1984 թթ. պեղվել է մեհյանի հյուսիսային պատը, որից պահպանվել են ճեղքված սպիտակ ավազաքարից հիմքերը և բավականին ողորկ մշակում ունեցող կավաշեն պատի մի հատվածը։

Վաղ միջնադարյան շերտերում հնագիտական նյութեր քիչ են հանդիպում (հասարակ խեցեղենի աննշան բեկորներ, ապակի, եռաթև նետասլաք (աղ. I. 11) և այլն)։ Հիշարժան է բյուզանդական բրոնզե կշռաքարը 8,8 գ քաշով, լատիներեն մակագրությամբ՝ B և N (2 նոմիսմա. նոմիսման բյուզանդական ոսկե դրամի քաշն է)։ Կշռաքարը օգտագործվել է ոսկե դրամները կշռելու համար, ինչպես նաև ոսկերիչների կողմից (աղ. I, 3)։



Աղ. I

V դարի կաթողիկոսական պալատից արևմուտք պեղվել է մի մեծ տարածք, որտեղ բացվել են հում աղյուսե պատերով շինությունների մնացորդներ, ավերված 893 թ. երկրաշարժի ժամանակ։ Շինարարական տեխնիկայի տեսակետից այդ կառույցների առանձնահատկությունը նրանում է, որ դրանք չունեն քարից հիմքեր և կավաշեն պատերը անմիջապես դրվել են հողի վրա։ Կոնստրուկտիվ տեսակետից դա նորույթ չէր Դվինի միջնադարյան ճարտարապետության մեջ։ Մեզ հայտնի են վաղ միջնադարյան կառույցներ միջնաբերդում, որոնց պատերը նույնպես չունեն քարե հիմքեր։ Իհարկե, այս հանգամանքը իր բացասական ազդեցությունն է թողել պատերի ամրության վրա, որոնք ունեն բազմիցս վերանորոգումների հետքեր։ Բացի պատերի վերանորոգումներից, նկատվում են ամուր պնդացրած կավից մի քանի հատակներ։ Շինությունների վատ պահպանվածությունը հետևանք է կավե այս ճարտարապե-

տության, որը և դժվարացնում է կենտրոնական թաղամասում հատակագծային հստակ պատկերի ուրվագծումը։

Ի տարբերություն ճարտարապետական մնացորդների, արհեստագործական արտադրանքը լավ է պահպանվել և ներկայանում է բավականին հարուստ ժողովածուով։ Այդ շերտում շարունակվում է դուրս գալ մեծ քանակությամբ եռագույն ջնարակած խեցեղեն (կանաչ, դեղին և դարչնագույն)։ Խեցեղենի այս տեսակը, որը ջնարակի արտադրության նոր փուլի վաղագույն օրինակ է, Դվինում հայտնի է IX դարից։ Դրանք տարբեր տիպի թասեր են, երբեմն կճուճներ, աչքի են ընկնում բուսական և երկրաչափական ձոխ, հստակ զարդերով՝ կե-



Աղ. II

տեր, սլաքներ, վարդյակներ, ոճավորված ճյուղեր և այլն։ Անոթներն իրենցից ներկայացնում են ծանծաղ թասեր կոր պատերով, քիչ ներս ծալված ուղիղ պսակներով և ցածր օղակաձև նստուկով (աղ. II, 6)։ Ջնարակած խեցեղենի այս տիպը իր բոլոր հատկանշական կողմերով նույն դարաշրջանում հանդիպում է մերձավորարևելյան, միջինասիական և անդրկովկասյան կենտրոններում։ Հանդիպում են նաև կապարային սպիտակ ֆոնի վրա կոբալտի (կապարի) դարդերով թասերի բեկորներ, որոնք ամենայն հավանականությամբ սերում են Սամառայից։

Հասարակ խեցեղենը գրեթե կրկնում է այն ձևերը, որոնք հանդիպում են կենտրոնական թաղամասի նախորդ տարիների նյութերում (կճուճներ, թափորներ, հաստ պատերով խորը թասեր (աղ. II, 1), գլանաձև անոթներ հորիզոնական կանթերով և այլն)։ Մեծ թիվ են կազմում մանրահատիկ դեղնավուն կավից պատրաստած և փայլեցրած մակերես ունեցող, պրոֆիլավորված բերաններով և նուրբ կանթերով փոքր սափորները։ Դրանք ունեն գնդաձև և ուղիղ իրաններ, հարթ հատակներ, որոնցից երկուսի վրա կան երեք փոքր ոտքեր։ IX դարի համար այս խեցեղենը հաղվադեպ երևույթ է։

Ուշագրավ է փոքրիկ և նրբագեղ, գնդաձև իրանով և հորիզոնական ումկաձև կանթներով կարմրափայլ կճուճը։ Թվում է, որ դա եղել է խեցեգործի արհեստանոցում դրված նմուշ, որի նմանակով պատվիրվել և պատրաստվել են մեծ անոթները (աղ. II, 9)։

Զգալի քանակ է կազմում ապակին, որն աչքի է ընկնում գույների և ձևերի բազմազանությամբ։ Շատ են անգույն, թափանցիկ ապակուց պատրաստված բարակապատ բաժակները, թեք մատնեքներով ղամպարները, 25—30 սմ տրամագիծ ունեցող սկահակները, բշշավոր մակերեսով թասերը և այլ օրինակներ (աղ. II, 11—13)։ Գտնվել են կապույտ, վճիտ ապակուց բաժակի բեկորներ, որոնք հազվադեպ են հանդիպում Դվինում և բնորոշ են բյուզանդական ապակեգործությանը։

Համեմատաբար քիչ են մետաղե իրերը։ Գտնվում են տարբեր չափսի երկաթե դամեր, օղեր։ Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում փայտե դռան մեծ փակի արտաքին երեսը բանալիների անցքերով, ձեռքի սղոցի բեկորը, լայն շեղբով ու բռնակով դանակը (աղ. I, 13, 16, 17), որոնք հազվագյուտ են Դվինի մետաղե հավաքածուներում։ Պղնձե իրերից հիշատակության է արժանի մեկկանթանի, բազմանիստ իրանով և երկար վզիկով փոքրիկ սափորը (աղ. I, 2)։

X—XIII դդ. շերտերը կենտրոնական թաղամասում վատ են պահպանվել ուշ շրջանի խիտ թաղումների հետևանքով և, բնականաբար, գտնված նյութերն էլ խիստ բեկորային են։ Այդ շերտում բացվել է կոմունալ մի կառույց, կազմված թրծած աղյուսով և կավե խողովակներով շարված երկու առվակներից, որոնք մտնում են թրծած աղյուսներով վերին մասում շարված խոր հորի մեջ։ Անշուշտ դա կապված է ջրահեռացման հետ և սպասարկել է մոտակա շինություններին, որոնց հետքերը չեն պահպանվել։ Նման կառույցներ Դվինում, հատկապես կենտրոնական թաղամասում, շատ են հանդիպում և հետևանք են քաղաքում կոմունալ տնտեսության բարձր զարգացման։ Ընդհանրապես միջնադարյան քաղաքներում կոյուղիների ցանցը լայն տարածում է ունեցել։ Դվինի վերոհիշյալ կառուցվածքի նման օրինակներ կան նաև միջինասիական հուշարձաններում[3]։

XVI—XVIII դդ. կենտրոնական թաղամասի ողջ տարածքը վերածվել է գերեզմանոցի։ Վերգետնյա գերեզմանային կոթողները չեն պահպանվել։ Գերեզմանները շարվել են թրծած աղյուսներով կամ տեղական թերթաքարերով, ծածկվել են մեծ սալերով։ Թաղման դիրքը արևելքից արևմուտք է, որը դրանց քրիստոնեական լինելուն ապացույց է։ 1983 թ. այս հատվածում բացվեց պատերով անջատված և աղյուսե հատակով մի փոքրիկ հրապարակ, որի կենտրոնում կար մոխրով լցված փոքրիկ օջախ, հավանաբար արված ծիսական արարողությունների համար։ Որպես կանոն այդ գերեզմանները զուրկ են նյութերից, սակայն երբեմն հանդիպում են ղարդեր։ Այդ առումով հետաքրքիր են պղնձե բարակ թիթեղից ոլորած զույգ ապարանջանները (աղ. I, 12)։

Պեղումները շարունակվել են քաղաքի միջնաբերդում։ Բլրի գագաթում, սյունազարդ դահլիճի հյուսիսային հատվածում բացվել են հելլենիստական շրջանի կանոնավոր հատակագծով կառույցների քարաշար հիմքերով պատեր, սյունասրահ՝ մի զույգ տորաձև խարիսխներով (նկ. 1)։ Կարևոր աշխատանք է տարվել պեղվող հատվածի շերտագրական պատկերի մեջ հստակություն մըտցնելու ուղղությամբ։ Հարցն այն է, որ Դվինի վաղ բնակավայրը ոչնչացել է մ. թ. ա. VIII դարում և բլուրը նորից բնակեցվել է մ. թ. ա. II դարում։ Հելլենիստական շերտը, որը բլրի գագաթում բավականին հզոր է, վերին մասում ունի ընդգծված ստվար մոխրաշերտ, որը հավանաբար հետևանք է մ. թ. I դարի կեսերին հռոմեացիների կատարած ավերածությունների[4]։ Դրանից անմիջա-

[3] С. А. Ершов. Дандеиакан.—КСИИМК, 1947, вып. XV, с. 35.

[4] Ա. Ա. Քալանթարյան. Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ. Երևան, 1970, էջ 10։

պես հետո նկատվում է ժամանակագրական խզում մինչև IV դարի 30-ական թթ.։ Այս պատկերը ցայտուն դիտվում է նաև Դվինի այլ հատվածներում։ Հելլենիստական շրջանում բնակավայրը նորովի կառուցապատվել է։ Հետաքրքիրն այն է, որ վաղ միջնադարում տեղ-տեղ օգտագործվել են հելլենիստական կառույցների պատերի հիմքերը։

Նկ. 1

Հնագիտական նյութերը սակավ են, հիմնականում՝ բեկորային։ Խեցեղենը ներկայացված է տարբեր կիրառության անոթներով, որոնց մի մասը գունազարդ է։ Գտնվել են նաև մետաղե իրեր՝ բրոնզե հայելի և երկաթե փորրիկ դանակ (աղ. 1, 4,7)։

Որոշ ստուգողական աշխատանքներ են կատարվել նաև IV դարի սյունազարդ դահլիճում։ Նախապես պարզվել է, որ կան որոշ շեղումներ նախորդ չափագրությունների[5] և իրական պատկերի միջև։ Դահլիճի արևմտյան պատի ուսքրման ժամանակ գտնվել է ծածկի քիվի մի բեկոր, որն ունի եռաստիճան եզրագծում և ավելի շատ հակվում է դեպի անտիկ նման նյութերը։

Միջնաբերդի արևմտյան լանջին, ստորին բերդում պեղվում են երրորդ խանդակի շինությունները, որոնցից պահպանվել են քարաշար հիմքերի և կավե պատերի մնացորդները (նկ. 2)։ Սենյակները և տնտեսական նպատակներով օգտագործվող անկյունները միմյանց հետ հաղորդակցվել են միջանցքներով և մուտքերով։ Գրեթե բոլոր սենյակներն ունեն թոնիրներ, որոնցից մի քանիսը մեծ են, հիանալի պահպանված շուրթերով։ Թոնրափերը շարված են թրծած աղյուսներով։ Այսպիսի խիտ կառուցապատման պայմաններում սենյակների լուսավորության հարցերը լուծվել են միայն երդիկների օգնությամբ, որոնց տակ անձրևաջրի համար եղել են հորեր՝ ծածկված ձևավոր հարթ սալերով։ Շինություններն ունեն երկու-երեք հատակ, իսկ պատերի վրա նկատվում են բազմաթիվ վերանորոգումների հետքեր։

Պեղվող հատվածը մտնում է նախորդ տարիներից բացվող առևտրաարհեստավորական ընդհանուր թաղամասի մեջ, նրա ժամանակագրական պատկերը շատ հստակ է՝ XII—XIII դդ., որը փաստարկվում է ինչպես հնագիտական նյութերով, այնպես էլ տեղում գտնված դրամներով։ Շինությունների հատակների տակ, տեղ-տեղ բացվում է վաղ բրոնզի ժամանակաշրջանի շերտը, սև փայլեցրած խեցեղենով։ Կարելի է ենթադրել, որ միջնաբերդի այս հատվածը մինչև XII դարը աղատ է եղել կառուցապատումից. դուցե և բլրի դագաթի եզրով անցել է շինությունները պաշտպանող մի երկրորդ փոքր պարիսպ։ Այս

5 Կարո Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները. II. 1932, նկ. 69, 72։

հարցերը կարող են լուծվել հետագա մանրազնին աշխատանքների ժամանակ։

XII—XIII դդ. արհեստագործական արտադրանքի ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն գտնված նյութերը։ Տարասեռ խեցեղենի մեծ կուտակում է նկատվել փուլ եկած փոքր սենյակներից մեկում։ Շատ են կարմիր փայլեցրած շքեղ սափորները և կճուճները (աղ. II, 2), ամբողջական ու բեկորներով։ Սափորներից մեկի վրա կլոր մեդալիոնի մեջ փորագրված է

Նկ. 2

ցուլի պատկեր, կտուցից կախված տերևով (աղ. II, 5, մոտիվ, որը գալիս է դեռ վաղ միջնադարից)։ Զգալի քանակ են կազմում դրոշմազարդ դոտիներով անոթների բեկորները, դեղնավուն սափորների տարբեր տեսակները, ծորակով անոթները, կժերը, ճրագները, խուփերը, սնդկամանները և այլն (աղ. II, 3, 4, 7, 8, 10, 14)։ Հատկապես ուշադրության են արժանի երկու մեծ կճուճները, որոնց ողջ մակերեսը ծակոտկեն է. հավանաբար դա արված է անասնապահական մթերքներ պահելու նպատակով։ Զուտ արտադրական դեր է ունեցել մեծ խուփը, որի մակերեսը խիտ պատված է անցքերով։

Հարուստ է ներկայացված ջնարակած խեցեղենը՝ միագույն և բազմագույն, անզարդ և փորագիր զարդերով։ Տոկոսային հարաբերությամբ մեծ թիվ է կազմում կանաչ ջնարակը, որը մասսայական տարածում ունի։ Ջնարակած խեցեղենը հիմնականում ներկայացված է տարբեր չափերի թասերով, սակավ՝ կճուճների բեկորներով։ Իր ձևով եղտկի է կանաչ ջնարակով պատած ճրագը, որը քառածորան է, ունի զանգվածեղ կանթ, ստորին թասաձև հենակը կոտրված է։

Հախճապակին խիստ բեկորային է, կան տեղական կապույտ և նկրմուծված շողյուն անոթների մասեր։ Սակայն գտնվել է կապույտ հախճապակուց մի կարաս (բեկորները դուրս են եկել դեռևս 1981 թ.), որը իր ձևով և հարուստ հարդարանքով եզակի անոթ է և առաջին անգամ է հանդիպում Դվինի նյութերում։ Այն երկարավուն իրանով է, վերին մասում գնդաձև, լայն, առանց պսակի բերանով։ Կարասի իրանի ողջ վերին մասը պատած է բուսական ճոխ զարդով։ Կանթերը ձևավոր են և կեղծ։ Կարասը պատրաստված է տեղում, սակայն պարսկական ծագում ունեցող անոթների անմիջական ազդեցությամբ (նկ. 3)։

Մետաղից իրերը ներկայացված են երկաթե դանակներով, գամերով, դռան փակի օղերով և այլն (աղ. I, 5, 6, 14, 15)։ Պղնձե զարդերից հետաքրքիր են շղթայով պահպանված կախիկը, բարակ թիթեղից զարդարուն ապարանջանը, սատանին (աղ. I, 1, 9, 10)։ Վերջինս իր ձևով և հարդարանքով կրկնում է Իջևանի շրջանի Գետաշեն գյուղի տարածքի մոնղոլական թաղումից գտնված սատանին[6]։

Նկ. 3

Միջնաբերդի հարավային մեծ բուրգի շրջանում կատարվող պեղումները երկու նպատակ են հետապնդում։ Նախ, կտրվածքների միջոցով ստեղծել շերտագրական հիմնավորված պատկեր և երկրորդ, բացել կրաշաղախ պատերով մոնումենտալ մեծ շինությունը։ XII—XIII դդ. շինություններին բնորոշ են կավաշեն պատեր, մանր գետաքարի հիմքով, երբեմն թրծած աղյուսից հատակներ, որոնք պահպանվել են հատվածաբար (նկ. 4)։ Սենյակների մեջ շատ են փոքր թոնիրները։ Ջնարակած խեցեղենը գրեթե կրկնում է ստորին բերդում հայտնաբերվածի ձևերը։ Հորերից մեկում գտնվել են մեծ քանակությամբ կավե խոտանված անոթներ (ջնարակած և հախճապակի)։ Ամենայն հավանականությամբ մոտակայքում գործել է արհեստանոց, որի հետքերը առայժմ չեն հայտնաբերվել։ Այստեղ պատրաստվել են նաև հախճապակե տակառաձև ուլունքներ, որոնք հայտնի են ամբողջական և խոտանված օրինակներով։ Այս նույն շերտից հայտնի են բրոնզե դարդեր (աղ. I, 8), հասարակ խեցեղեն (աղ. II, 14, 15), վրացական (Թամար թագուհու) և ելտկուղյան դրամներ։

XI—XII դդ. շինություններ քիչ են բացվել, նկատվում են քարե ամուր հիմքերով կանոնավոր պատեր՝ մի շարք վերանորոգության հետքերով։ Պատերից մեկի մեջ դրվել էր VII դարի կաթողիկե եկեղեցու քարի բեկոր, հայերեն արձանագրությամբ (պահպանվել են մի բանի տառեր)։ Շինության մի հատվածը եղել է տնտեսական մաս, տեղում պահպանվել էին երկու ամբողջական մեծ կարաս։ Այս շերտի ստորին հորիզոնին բնորոշ է անգորով նկարազարդված ջնարակած խեցեղենը, որը հայտնի է նաև նախորդ տարիների պեղումներից։

Դվինի և Հայաստանի միջնադարյան ճարտարապետությունը ուսումնասիրելու համար կարևոր նշանակություն են ստանում նույն տեղամասում բացվող մոնումենտալ մեծ կառույցի պեղումները։ Իր հատակագծով և կոնստրուկ-

[6] Հ. Եսայանի պեղումները։ Նյութերը հրատարակված չեն։

տիվ մտահղացմամբ դա եդակի մի հուշարձան է, որի ծավալատարածական հարցերը աստիճանաբար լուծվում են յուրաքանչյուր տարվա պեղումների ընձեռած հնարավորությունների սահմաններում[7]։ 1984 թ. արևելյան պատը ներսի երեսից խորացվել է մինչև հիմքերը, որի հետևանքով բացվել է շատ հետաքրքիր պատկեր։ Շինության հաստահեղույս պատերի հիմքերը դրվել են մ. թ. ա. I հազարամյակի շերտում, որտեղից դուրս է գալիս մեծ քանակությամբ սև փայլեցրած և թուխ խեցեղեն։ Շինության պատը, որը պահպանվել է 7,0 մ

Նկ. 4

բարձրությամբ, կրում է մի շարք վերանորոգումների հետքեր։ Ստորին հատվածում մոտ 1,5 մ բարձրությամբ պահպանվել է սվաղը։ Նկատվում են երեք հատակ, ստորին երկուսը՝ վաղ միջնադարյան շերտերում։ Վերին հատակի վրա կա հաստ մոխրաշերտ, որն ապացույց է խոշոր հրդեհի։ Շինարարական որոշ առանձնահատկություններից դատելով և խեցեղենի տվյալներով մոնումենտալ այս շինությունը, ամենայն հավանականությամբ, կառուցվել է V—VI դդ.։ XI դարում այն արդեն ավերվել էր և նրա հարավային պատի վրա դրվել է վերանորոգված պարսպի մի հատվածը, կլոր աշտարակով։ Վերջին երկու հարյուրամյակները Դվինի համար այնքան լի են իրադարձություններով (IX դարի երկրորդ կեսի երկու երկրաշարժերը, IX—XI դդ. պայքարը քաղաքի համար Բագրատունիների և արաբների միջև), որ դժվար է որոշել, թե շինությունը երբ կարող էր կորցնել իր նշանակությունը։ Կարևոր հարց է, թե ի՞նչ ֆունկցիոնալ դեր էր խաղում կառույցը անմիջապես բերդապարսպի հարևանությամբ։ Առայժմ, չունենալով ստույգ տվյալներ, կարելի է միայն ենթադրել, որ այն հասարակական բնույթի շենք էր և ելնելով նրա հսկա չափերից՝ պետական նշանակություն ունեցող կառույց։

Դվինի քաղաքային մասի արևմտյան թաղամասերից մեկում, Հնաբերդ գյուղի կոլտնտեսության արտադրական շինությունների մոտ, շինարարական աշխատանքների ժամանակ գտնվեցին խեցեղենի արտադրության հետ կապված նյութեր՝ խոտանված ջնարակապատ թասերի բեկորներ, եռոտանիներ և այլն։ Տեղի մասնրազնին ուսումնասիրությամբ և պեղումներով բացվեցին խիստ ավերված կավաշեն պատերով հնոցի մնացորդներ (0,8 մ տրամագծով), որի

[7] Շինությունը պեղվում է 1979 թ. և նրա վերաբերյալ նախնական դիտողությունները արվել են արշավախմբի աշխատանքներին նվիրված հաշվետվություններում։

մեջ իրար վրա շարված էին շուրջ երկու տասնյակի հասնող ջնարակած թասեր, բաժանված եռոտանիներով։ Թասերն իրենց արտաքին տեսքով և չափերով գրեթե միատիպ են. տարբերությունները միայն ջնարակի գույների (բաց դեղնավուն և կանաչ, միագույն), ինչպես նաև բուսական և երկրաչափական զարդերի մեջ են։ Թրծման հնոցն իր նյութերով թվագրվում է XII—XIII դդ.։

Դվինի նման խեցեգործական մեծ կենտրոնի համար այսօրինակ արհեստանոցների գյուտերը լուրջ հետաքրքրություն են ներկայացնում տեխնոլոգիական հարցերի քննության և արտադրության կազմակերպման ուսումնասիրման առումով։ Քաղաքի արևմտյան այս թաղամասը հայտնի է որպես արհեստագործական, մասնավորապես՝ կավագործական հատված, որտեղից դեռևս նախորդ տարիների պեղումների ժամանակ գտնվել են մեծ քանակությամբ խոտանված իրեր, թրծման պարագաներ, հնոցի մասեր և բացվել են արտադրական կառույցների առանձին հատվածներ։ Պետք է ասել, որ Դվինում արտադրության կազմակերպումը այնքան բարձր մակարդակի վրա է եղել, որ յուրաքանչյուր մեծ արհեստանոցին բնորոշ է եղել անոթների ձևերի, զարդերի միատիպություն, այսինքն՝ ստանդարտիզացիա։ Դա շատ ցայտուն երևան եկավ 1968 թ. նույն թաղամասում կատարված պեղումների ժամանակ[8]։ Հետաքրքիր է, որ 1983 թ. գտնված նյութերը զարդերով և մասամբ թասերի ձևերով տարբերվում են հարևան արհեստանոցի նյութերից։ Դա վկայում է Դվինում կավագործական տարբեր դպրոցների առկայության մասին, որոնք իրենց ուրույն կնիքն են թողել արտադրանքի վրա։

Հետախուզական պեղումներ են կատարվել Տիկնունի ամրոցում, որը գտնվում է Դվինից մոտ 3—4 կմ հյուսիս, Ազատ գետի ձախ ափին, մի բարձր բլուրի վրա (նկ. 5_1)։ Տիկնունիի մասին երկու վկայություն է պահպանվել. մեկը կապվում է Դվինի հիմնադրման հետ, խոսքով II Կոտակ թագավորի (332—339 թթ.) ժամանակ անտառատնկման աշխատանքների կապակցությամբ[9], մյուսը՝ X դարի դեպքերի հետ։ Դվինի մոտ հիշատակված «Տալ Հասլի» ամրոցը և Տիկնունին Ա. Տեր-Ղևոնդյանը նույնացնում է[10]։

Ամրոցը գրավում է մոտ 5,0 հա տարածք, բավականին խաթարված է, տեղ-տեղ վերին շերտերը լրիվ լվացվել են անձրևաջրերի հետևանքով և բացվել են լերկ ժայռերը։ Բլրի եզրագծով կառուցվել է հզոր պարիսպ, որից պահպանվել են աննշան հետքեր։ Տիկնունին հնուց ի վեր եղել է Դվին քաղաքի հյուսիսային ֆորպոստ։ Տարիներ շարունակ Դվինի արշավախումբը ամրոցում կատարել է միայն վերգետնյա հսկանցիկ զննումներ, որի ժամանակ ֆիքսվել են կառույցների մնացորդները և հավաքվել են խեցեղեն նյութերի, մասնավորապես հախճասալերի բեկորներ։

1984 թ. բլրի հարավային մասում պեղվեց մոտ 100,0 քառ. մ տարածք։ Այստեղ բացվեցին թրծած աղյուսով շարված շինությունների առանձին պատեր, թոնիրներ, կիսաշրջան օջախներ և այլ մնացորդներ (նկ. $5_{2,3}$)։ Հնագիտական նյութը հիմնականում ջնարակած և հասարակ խեցեղենն է, որը ժամանակագրական տեսակետից աղերսվում է Դվինի վերջին շրջանի նյութերի հետ և որոշ գծերով տարբերվում։ Ամրոցի վերին շերտը ամենայն հավանականությամբ թվագրվում է XIII—XIV դդ.։ Պեղված տարածքը միաշերտ է, տեղ-տեղ մինչև 0,8 մ խորությամբ և նոտած է ժայռի վրա։ Այդ հատվածից գտնվել են հախճասալերի բազմաթիվ բեկորներ բուսական ճոխ դարդերով, արված կապույտ ֆոնի վրա։ Հախճասալերի վրա կան պարսկերեն արձանա-

---

[8] А. А. Калантарян. К вопросу о способах изготовления керамики в средневековом Армении.—Археологические памятники Грузии. II, Тбилиси, 1974, с. 280—290.

[9] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, III, Ը։

[10] Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական ամիրայություններ Բագրատունյաց Հայաստանում. Երևան, 1965, էջ 167։

դրություններ, որոնց բեկորային լինելը հնարավորություն չի ընձեռում ամբողջական տեքստեր վերականգնել։ Պարզ է, սակայն, որ դրանք պարսկական դասական հեղինակների գործերից վերցրած առանձին հատվածներ են։ Նման երևույթը տարածված է եղել պարսկական հախճասալերի հարդարանքում սկսած XII դարից և հանդիպում է ինչպես ողջ մուսուլմանական աշխարհում, այնպես էլ Անդրկովկասում։



Նկ. 5

Տիկնունիի հախճասալերը, որոնք նաև տարբեր ձևերի են՝ կապված կիրառական հնարավորությունների հետ, պատրաստվել են տեղում և որոշակիորեն տարբերվում են պարսկական հախճասալերից, թեև կրել են դրանց ազդեցությունը։

Նույն հատվածում, հախճասալերի հետ գտնվել են նաև գունավոր, հարթ ապակիների բազմաթիվ բեկորներ, որոնցով հավանաբար վիտրաժներ են արվել։

Ապակիներն աչքի են ընկնում վառ կարմիր, կանաչ և դեղին գույներով, երբեմն երկու գույների համադրությամբ։ Ապակիների արտաքին հատկանիշների նախնական քննությունը ցույց է տալիս, որ դրանք Դվինում չէին կարող արտադրվել (Դվինն այդ ժամանակ դադարել էր գոյություն ունենալուց), բացակայում են նաև Անիի նյութերում։

Նյութերի այս քննությունը մեզ բերում է այն համոզման, որ ամրոցի հարավային մասում, որտեղից հրապարակ համայնապատկեր է բացվում դեպի Արարատյան դաշտը և երկու Մասիսները, կառուցվել է պալատական եամ հասարակական ինչ-որ շինություն, որը խիստ ավերվել է հետագայում։ Այդ հատվածում, ամրոցի ենթադրյալ մուտքի մոտ կատարված պեղումները երևան են բերել քարաշար պատերի առանձին մասեր, երբեմն 1,0—1,5 մ բարձրությամբ, սակայն ժամանակագրական տեսակետից դրանք նոր բան չեն տալիս։ Մնում է հուսալ, որ Տիկնունիում հետագա աշխատանքների ժամանակ կբացվեն ամրոցի հիմնադրման հետ կապված նյութեր։

ОСНОВНЫЕ ИТОГИ РАБОТ ДВИНСКОЙ ЭКСПЕДИЦИИ В 1983—1984 гг.

А. А. КАЛАНТАРЯН

Резюме

Археологические работы продолжались в центральном квартале города и в трех участках цитадели. Раскопками выявлен богатый материал (металл, керамика, стекло) и архитектурные остатки жилищ, относящиеся к средневековому периоду города (IV—XIII вв.). Весьма интересна находка византийской экзагии (2 номисма). Продолжались исследования в районе патриаршего дворца V в. (центральный квартал), большого монументального здания V—XI вв. (южная башня цитадели) и ремесленного квартала XII—XIII вв. (западный склон цитадели). На вершине холма открыты постройки эллинистического периода.

Разведочные раскопки велись на территории города, где была обнаружена гончарная мастерская XII—XIII вв., а также в крепости Тикнуни, расположенной неподалеку от Двина.